



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 37

ՀԱՐԱԹ

10 ՄԱՅԻՍ 1908

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ

ԶԵՆԻԹ

ՄԳԼՍԵՍՈՒՄԻ ԵՄԻՆՈՒՄԻ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաղճէ-Գարու, Օռդուի-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փարսա

(T. آصاوریان) شرکت مطبوعه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի մատենի քիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
վիճակագրական մեխանիկ
կը գտնուի

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ՝
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեան
եւ աղաւաղի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅՈՒՆ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

(MANUFACTURING COMPANY)



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն թելանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅՐԱՅՈՒՆ ԿԱՅՍ
ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|---------------|--|
| ԲՍԲԱ | (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 : |
| ՍԿԻՏԱՐ | 2արշը Պօյս, թիւ 120 . |

Կայսարեայ երաւեսաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

Թերթ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գա-
ւառներու համար տարեկան 108 դրշ. վեց-
ամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւք փառա: **ՐԵԻԵԼՔ**
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսա-
բաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, անտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն.
բաց ի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագիրն լայտը է ուղղել Տէր և
Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին.
Ղալաթիա, Մանուտիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին ապարանն ու խմ-
բագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ—ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 37

ՇԱՐԱՐ-

10 ՄԱՅԻՍ 1908

Տ Ի Պ Ա Ր Ն Ե Ր

ETUDE

Իրենց զոքանջներէն գանգատողները, ապահովագրական միջնորդները, թաղականութեան համար խենդեցողները, սիրային արկածնին պատմողները, բուսակերութեան առուելութիւնները գովողները, շարունակ իրենց զաւակը երկինք հանողները, այդ բոլոր շատախօսները, գլուխ տանողները, rongeurները, իբրեւ թէ բաւական չըլլային, նոր թիփ մըն ալ մէջտեղ ելաւ վերջերս... բամպակ խաղացողը: Կարգուիլ միտքէդ չէ անցած երբէք և ահա՛ gagaին մէկը օրն ի բուն, շարունակ, ամէն յարմար կամ անյարմար պարագայի, քովդ կը մօտենայ, զոքանջէն կ'սկսի գանգատիլ, անոր անտանելիութիւնը կը նկարագրէ, ձեռքէն քաշածները կը պատմէ, կարգուած ըլլալուն կը զղջայ, կանխօք, կը հայհոյէ և վերջ ի վերջոյ կը խրատէ քեզի երբէք չամուսնանալ, իբրեւ թէ մայր չու-

նեցող աղջիկներ չի գտնուէին աշխարհիս վրայ:

Առաջին անգամ, հաճոյակատարութեամբ մտիկ կընես և քանի մը մխիթարական խօսքերով կը ճամբես քովէդ: Երկրորդ անգամուն տեսակ մը անտարբերութեամբ ականջ կուտաս, — էհ, համբերութիւն, ալ եղեր է, ինչ ընես, բարեկամ — կը խրատես մարդուդ. երրորդին քիչ մը պաղ կը վարուիս, չորրորդին գործ ունենալդ կառարկես և կելլես կերթաս. հինգերորդին ան քեզի չի մօտեցած տեղէդ կելլես, վեցերորդին չի ճանչնալ կը կեղծես, եօթներորդին չես բարեւեր, ութերորդին բերանդ կը բանաս, օրհնած բերանդ և բառարանիդ բոլոր հայհոյանքները կը թափես ներկայ և աւագայ բոլոր զոքանջներուն գլխուն, բոլոր հարսերուն, բոլոր կիներուն, բոլոր փեսաներուն և բոլոր ամուսնութիւններուն գլխուն:

Վերջապէս դուն աշխարհ եկած չես ամէն դժգոհ փեսաներու տրտունջները մտիկ ընելու, չէ՞:

Ապահովագրական միջնորդը, այդ կարգի թիփերուն ամէնէն անտանելին է: Ուրիշ խօսք չունի բերանը, ուրիշ բան չի գիտեր, խառն ապահովագրութիւն, քսան տարի, 9/10 4 տոկոս. ընտանիքիդ, զաւակներուդ ապագան, խնայողութիւնը սանկ, անհրաժեշտութիւնը նանկ. *rente viagère*, երկու գըլխու վրայ ապահովագրութիւն, *Mutual Life, New-York, vie simple, police libérée*, մահդ աչքիդ առջեւ կը բերէ, անձնասպանութեան պարագան միտքդ կը թողու, օրինակներ կուտայ. *La New-York* վար կը դարնէ, իր ընկերութեան նախագահին առած տարեկանին խոշորութեամբը աչքդ չլացնել կը փորձէ, և *patati et patata*, կը քրոնի, ձայնը կը քաշուի, հազը կը բռնէ, աչքերը կոպիճներէն դուրս կը ցատկեն, բերանը կը չորնայ և վերջը վերջը գլխահակ կը մեկնի որովհետեւ երկու բառով կը հասկցնես թէ, *il n'y a pas méche*, և թէ որոշած ես մեռնելէդ առաջ չապահովագրուիլ:

Ամէնէն կտրուկ ճամբան է այդ: Բայց ան հոգը չընեն, վաղը նորէն կը հանդիպի, եթէ վաճառատանդ մէջ չի գտնէ զքեզ՝ տունդ կուգայ, փողոցը կը բռնէ, ժամէն ելլելուդ կսպասէ, սրճարանը ետեւէդ կուգայ, քարափին վրայ կը հալածէ և կը հասցնէ զքեզ այն վիճակին՝ որ ալ կը զղջաս աշխարհ եկած ըլլալուդ:

Քիչ մը վերը յիշած ամէն թիփերս ալ ասոնցմէ վար չեն մնար. համբերութիւնդ չաւար կը գործածեն, քաղաքավարութիւնը ստուած բանը կը մոռնան, հոգիդ կը հանեն, ժամանակդ պարապ տեղը սպառել կուտան, չեն մտածեր թէ թերեւս ուրիշ գործ ունիս, չեն մեղքնար զքեզ, չեն քաշուիլ և չեն ամբշնար:

Հապա բամպակ խաղացողը, աս թիփը ամէնուն վրայ կոխեց անցաւ: Բամպակ խաղացող բարեկամ մը ունենալէ աւելի խելացութիւն է գէշ զոքանչ մը ունենալը, գոնէ աղջկանը թեւին վրայ կը դնես գլուխդ և կը մոռնաս թէ մայրը թեւ մըն է: Ամէն դժբաղդութիւն մեզի համար է. բամպակախտէ

բռնուած բարեկամ մըն ալ ես ունիմ թեւերուս վրայ: Անցեալ Օգոստոսէն առաջ շատ կը տրէի զինքը, պատուական մարդ մըն էր, *posé*, լուրջ. հաճոյակատար, խելանի, հետը խօսիլ հաճոյք մըն էր, բան կը սորվէիր, ընկերութիւնը կը փնտռէի, շահեկան էր այդ և գերադրապէս հաճելի. բայց անկէ ի վեր խոյս կուտամ իրմէ, ինչպէս ֆօլեհայէն, տգեղ կիներէն և ամէն թաղականի կոխներէն:

Եթէ աշխարհիս բոլոր լեռները, բոլոր բլուրները, երկինքը, ծովը, դաշտերը, ծառերը, տունները, կիներուն կուրծքերը, աղջիկներուն բուժբերը բամպակէ շինուած ըլլային, դարձեալ բամպակի վրայ այնքան խօսք գտնել կարելի չի պիտի ըլլար:

Ուրկէց ալ կը գտնեն այդքան խօսք. Աստուած իմ: Ալ քովերնին ոչ գութ կայ (քիչ ատենէն կուս ալ չպիտի մնայ) ոչ բարեկրթութիւն, ոչ խղճմտանք, ոչ զգացում և ոչ ալ խելք: Դիմացնին ելա՞ր, ալ դուն անոնց գերին ես, պէտք է մտիկ ընես, բանդ գործդ, քու զբաղումներդ մէկդի պէտք է դնես, տունդ տեղդ մոռնաս, և ուրանաս. ինքզինքդ քրիստոնավայել համակերպուած թեամբ մը:

Վերջին անգամ հանդիպեցայ բարեկամիս, բամպակ խաղացողին: Զարմանալի բան, որքան փոխուեր է: Դեռ անցեալները կասկարմիր էին այտերը, ֆէսը մէկ կողմը նետուած էր, կօշիկները կրբն կրբն ձայն կը հանէին, պիտները վեր վեր կը նայէին, ուրախութիւն, կեանք, երիտասարդութիւն դուրս կուգար այդ յիսուն տարեկան մարմինէն...: Այսօր ուրիշ մարդ է կարծես: Բալթօին օձիքը վեր է դարձուած, փողկապը անխնամ կերպով կապուած է, ածիլուիլ միտքը չէ եկած, կօշիկները ձայն չեն հաներ, պիտները՝ անմեղ կոյս աղջկան մը աչքերուն պէս վար կը նային, դէմքը դեղնեւ է, թուրութիւն մը կայ վրան, յուսահատական բան մը:

Ինֆլուէնցայէ բռնուածի կերպարանք մը դոր տեսնելուդ քինինօյի թապլօյիտ մը բերանը թխմելդ կուգայ: Սովորականին պէս — այսինքն Օգոստոսէ ի վեր ըրածին նման աթոռը կը մօտեցնէ իմինիս և պապանծելիք բռնուելիք բերանը կը բանայ:

Մտիկ ըրէք:

— Նոր բան մը իմացա՞ր:

— Հա՛, Boite à Fursyn ուրբաթ գիշեր:

— Եղբայր, հարցուցածս ադ չէ:

— Նոր, նոր, բանը կայ, կայնէ, Մկրտիչը կը նշանուի կոր . . . :

— Անոր ալ խերը անիծեմ, ուրիշ խօսք ունի՞ս: Եկած թէլէկրաֆը իմացա՞ր:

— Կարեւորութիւն չունի, Լամատորֆ յայտարարեր է թէ . . . :

— Դուն ռւբ տեղուանքն ես, աղբար, վերջին հեռագիրը 48 բունթ վար, ատկէ խապար ունի՞ս, ան նայինք մենք:

Բռնուեցայ, ալ ճար չիկայ, վարագործը քացուեցաւ, մարդս իր դերը պիտի կատարէ:

Հազար հինգ հարիւր երրորդ անգամ ըլլալով, պէտք է իր երեմիականին ականջ դնեմ:

— Որո՞ւ մտքէն կանցներ, réaction մը կատարէի կոր, շաբաթ մը առաջ ըսեր էի, տակայն ատանկ պիտեմպիւրէ, 50 սէնթ . . . : Ստիկայ Նիւ Եօքի cliques գործն է, քանի որ բէքլթան 9,900,000 պակեա է ըսին, հեկլայք ատանկ բան մը պիտի ըլլար. քսան օրուան մէջ 1,500 լիբայ դարնելը բան մը չէր: Երեք հարիւր պակեա չի ծախէի նէ, այսօր ֆէսս ծուռ կը դնէի. կեցէ վեր պիտի ելլայ, 9 բլնին պիտի գանենք: Սըւրին հեռագիրը tendance à la hausse կըսէ կոր, պիտի տեսնաս: Եթէ Դեկտեմբերի սկիզբը 1,000 պակեա առած ըլլայիր 5,80էն, այսօր 30,000 լիբա մէկ կողմ կը նետէիր, բայց քամանք տեսա՞ր: Սանկիւր պիւրօին բաբօրթօն տեսնելուս պէս ըսի քի 8էն վեր պիտի ըլլար: Պեոզ կեօրէ մէջը մտանք: Սթօրին հաշիւը շաշըմիշ ըրի: Ախպար, մարծը սոսկալի է: Ութ օր առաջ սթօբ-լօս մը ուզեցի ընել, թող չի տուին: Նօրաքնին հեռագիրը ցուցուցին, ինչ գիտնաս, Պրի կողմը ըլլաս նէ՞ Պիերի, աս կը գիտցուի: Ռեֆօլթան 11 միլեօն ըլլար նէ, 66 խե, չէ, հեմ ինը միլեօն է, հեմ Յուլիսի վրայ սքեփիլաիօն ընող կայ: Ասանկ տարի հիշ եղած չէր: Հարիւր պակեային ճիշտ 150 լիբա կը կորսնցնեմ կոր երէկ գիշերէն այս առտու: Քեզիկ երկու շաբաթ առաջ ծախէի: Լիվրբուլին նայիս նէ, կեցէ գիշը վար պիտի իջնայ, աս reactionը պիտի ըլլար:

Հէմըլրիքէն հեռագիր կ'սպասեմ կոր, նա յինք, չըլլայ նէ հարիւր պակեա տանա ծախելու է . . . :

Եւ մարդուկս կը շարունակէ իր անհատնում խորհրդածութիւնները, առանց նկատի առնելու թէ՛ յօնքերս կը պուստեմ, յօրանջելէ կղկկս յօդատուելու վրայ՝ մօիկ ըրած չունիմ իրեն, խելքս ուրիշ տեղ է, ոչ բամպակին կարեւորութիւն կուտամ և ոչ ալ բամպակ խաղացողներուն:

Նորէն կ'սկսի իր շան քարոզը:

— Սպօքը սանկ, աւալիդրածը նանկ, 50 սէնթ, 3 բունթ և մնացած ամէն զրախօսութիւնները:

Չեմ գիտեր թէ բարկութիւնս ուրկէ առնելու եմ, նախ Աստուծմէ՛ որ մետաքսը կեցած տեղը բամպակը ստեղծելու ելաւ և կամ այն ամերիկացիներէն որ փոխանակ pocket խաղալու բամպակ խաղալ սկսան:

Մի՛խ, աս բամպակ խաղացողները, երկու ամիսէ ասոնց ձեռքէն քաշածներս Աստուած գիտէ միայն: Բայց ինծի ինչ եթէ փոխանակ բարձրանալու այդ բերքը իջնալու վրայ է, ուրիշ հոգ, ուրիշ ցաւ չունի՞մ:

Բամպակ խաղացողներէ չըմպատուած, օրն ի բուն, մինչեւ կէս գիշեր անոնց խօսքը մօիկ ընելու համար աշխարհք եկած չեմ ես:

Ոչ անոր իջնալը կը հետաքրքրէ զիս և ոչ ելլալը: Եւ վերջապէս ինչ է բամպակ ըսածնին, նիւթ մը՝ որ ականջնին ցաւողները կը գործածեն, մէյ մ'ալ այն կիները՝ որ բընութեան սխալները սրբագրելու պէտքը կը դառնան:

Իր այդ մատուցած դոյզն ծառայութիւններուն համար, այդքան բարձրացնել բամպակին գինը: Աւելին կայ: Բիշ մը առաջ ձեզ ներկայացուցած բարեկամս օր չի կայ որ զիս չի գայ չի գտնէ Բօսթիին: Կը խօսի կը խօսի միշտ բամպակ, բամպակ for ever, և իր այդ տաղնապին մէջ կը ձգէ կերթայ, ետին չի նայիր և մնաք բարով անգամ չըսեր:

Եւ կը պատահի որ գրեթէ միշտ ես վճարեմ իր սուրճը, որովհետեւ իր հեւքոտ վազքին մէջ այդ բանը միշտ կը մոռնայ . . . :

Գ. ՍԱՓԻՅԱՐ

ԿԱՎՈՇԱՊԱՏՈՒՄ

ԱՐՏԱՍՐՎՈՐ ՄԱՐԴ ՄԸ

Սովորական մարդ ըլլալը շատ պայադի բան մըն է Ի. րդ դարուն:

Նորածեղութեան «վերջին աղաղակ» ն է... արտասովոր մարդ ըլլալը:

Թագուն հմայքը որ կայ մարդոց մնացած մասին, չնմանելու և բացառիկ զարտուղութիւն մը կազմելու մէջ Յակոբէն, Թորոսէն կամ Միհրան Ուղուրեան չեմ գիտեր ինչ չիք մը ունի, որուն չի կրնար թափանցել Պ. Եւէլքէնճեան, հակառակ քաջ գրաբարագէտ մը ըլլալուն:

Սովորական մարդ մըն էք, — ասիկա կը նշանակէ որ — ձեր թաղեցիներուն համարումը վաստկած էք, խանութպանները ձեզի կը յարգեն, Չատիկին չեօրեկ կուտէք և կաղանդին՝ անուշապուր, մայրիկները կը փափաքին աղջիկին ձեզի տալ և ճաշարանապետը չի վարանիր ձեզի ֆէքսի ընելու...:

Այս յատկութիւնները կրնան ձեզի երկնից արքայութեան արժանացնել, բայց, ի՞նչ փոյթ, մեղք որ հօսանքիք չէք:

×

Օրուան զանցաին կը հետեւիմ ես:

Էփսանքիք մարդ մըն եմ, ի՞նչ որ կայ ամէնէն արտասովոր...:

Նախ տունիս վարձքը կը վճարեմ, ինչպէս նաեւ բաժնեդինս ու դերձակիս պարտքը:

Ուրիշներուն ըրածը չկրկնելու համար, տուած խօսքս կը բռնեմ և ժամադրութիւններուս կ'երթամ:

Երբ աշխարհիս է՛ն հրապուրիչ կինը իր սենեակը հրաւիրէ զիս, անմիջապէս ոստիկանութեան կը յանձնեմ զայն՝ զիս գլխէ հանել փորձելուն համար:

Գրաւ կը դնեմ որ դուք Սիմօնիկ Ալաճաճեանէն տող մը չէք կտրդացած, ո՛չ ալ Մամուրեան Որդիէն, ես կը լափեմ զանոնք, որովհետեւ արտասովոր մարդ եմ:

Կառք չեմ նստիր, որովհետեւ այսօր հինգ զրուշ տուողը Ղալաթիայէն մինչեւ Շիրիլ Լանտոյով կ'ելլէ:

Պիտի փափաքէի բերնովս չուտել և ոտքերովս չքալել՝ ուրիշներուն ըրածը կրկնած չըլլալու համար, բայց մինչեւ հիմա ատոր միջոցը չեմ գտած:

Դո՛ւք թերեւս Մայէսթո Մանաս չէք հաւնիր և արժանի չէք տեսներ զայն՝ կեդրոնականի ուսուցիչ ըլլալու, բայց ես Մայէսթո Մանասին կը հիանամ, որովհետեւ... արտասովոր մարդ եմ:

Ինծի համար Եղուարդ Գոլանճեանը աշխարհիո է՛ն տաքարիւն արարածն է և ինտրոէ՛ն համակրելի Սկիւտարցին:

Ձմեռը գիւղ կ'երթամ և ամառը Բերա կը նստիմ, գիշերը կը նստիմ և ցորեկին կը քնանամ, անկողնիս մէջ արթուն կը կենամ և երեկոյթի մէջ կը խռկամ, որովհետեւ... հօսանքիք մարդ եմ:

Ուրիշները միմիայն իրենց գրածները կը ստորագրեն, ես ընդհակառակ ուրիշներուն գրածները կը ստորագրեմ: Բանագող կ'անուանեն զիս, ես բանագող չեմ, այլ արտասովոր մարդ եմ:

Ամէն մարդ կը յաւակնի խելացի ըլլալ, ես ամէն մարդու ըրածը չընելու համար կը նախընտրեմ անխելք մնալ:

Ամէն մարդ իր պատիւին վրայ կը դողայ, ես իմ արտասովոր մարդու համբաւիս չպիտի կերցնէի այս... անպատուութիւնը, կրնա՞ք ուղածնիդ ըսել, ես իմ պատիւիս վրայ չեմ դողար:

Գրամ վաստկելիւ ա՛յնչափ սովորական բան մը դարձած է և ա՛յնքան սովորական մարդիկ փարա կը շահին այսօր որ, ի՞նչ պիտի արժէր իմ հօսանքիք մարդ մը ըլլալս, եթէ ասոր-անոր նման ես ալ ելլէի վաղը փառա վաստկել:

Կարապետ Ստեփանեանին վէպերը սքանչելագու՛մով կը կարդամ, որովհետեւ, ի՞նչ ընեմ, արտասովոր մարդ եմ:

Ամէն մարդ կը սիրէ ձրի թատրոն երթալ, արդ, ես ամէն մարդու պէս չեմ և կը սիրեմ իմ փարայովս թատրոն երթալ:

Վաղը, երբ կարգուիմ, պիտի առնեմ կին մը, որ զիս ամենեւին չսիրէ:

Կը յուսամ որ կինն ալ սովորական բան մը ըրած չըլլալու համար, երբէք չպիտի խաբէ զիս:

Միշտ արտասովոր բան մը ըրած ըլլալու համար, երբէ՛ք չպիտի կռուիմ կնոջս հետ, չպիտի ծեծեմ զայն և ամենեւին Դատաստանականին չպիտի դիմեմ:

Պիտի աշխատիմ որ զաւակներս կարելի եղածին չափ մարդ չըլլան:

Էփանքրիֆ մարդ մըն եմ, հետեւաբար մինչեւ վերջը կնոջս հաւատարիմ պիտի մնամ:

Երբէք աղջկան մը հետ չեմ սիրաբաներ, վասն զի արտասովոր մարդ եմ, և ո՛չ մէկ ապաստուհիի փէշին ետեւէն կը քալեմ:

Միշտ արտասովոր բան մը ըրած ըլլալու համար, պիտի ուզէի երբէք չմեռնիլ:

Ա՛յնչափ թշնամի եմ տափակութեան, որ ապուրը պատառաքաղով կ'ուտեմ և գոթիքը՝ դգալով:

Ամէնուն ըրածին հակառակը ընելու համար, պիտի բաղձայի նախ կարգուիլ և կարգուելէս վերջը՝ նշանուիլ:

Ձէք գիտեր ո՛րչափ զղջացած եմ աշխարհ գալուս, որովհետեւ ատիկա է՛ն սովորական բանն է զոր կը յիշեմ ըրած ըլլալ:

Միտաք Մեծարենցի բոլոր գրածները կը հաւկնամ, և Վահրամ Թաթուլի տաղանդին կը հիանամ:

Արտասովոր մարդ մըն եմ և երբէք միտքէս չեմ անցնեմ առնելիքներս գանձել:

Մի՛ գարմանաք, երբ օրին մէկը զիս վեղարով և սքեմով տեսնէք. Էփանքրիֆ մարդ մըն եմ:

Ա՛յնչափ արտասովոր մարդ մըն եմ, որ ամէն անգամ եկեղեցի երթալուս, մինչեւ վերջը կ'աղօթեմ, առանց չորս կողմս դիտելու:

Եթէ սովորական մէկը ըլլայի, լեցուն մարդ մը պիտի ըլլայի անտարակոյս, բայց Էփանքրիֆ մարդ մըն եմ և ոչի՛նչ գարմանալի, եթէ պարապ մէկն եմ այսօր:

Ա՛յնչափ օռիփնալ եմ, որ չեմ սիրեր բաբեկամներս կախել, ո՛չ իսկ մէկ մէծիտի համար:

Ձօքանջիս վրայ պիտի խնդրենամ և պալ-

տընդերուս չպիտի դարպասեմ, ո՛րչափ ալ գեղանի ըլլան անոնք և ո՛րչափ համայնքային մոլութիւն մը ըլլայ այդ բանը:

×

Հիմա որ հասկցաք թէ ո՛րչափ Էփանքրիֆ, արտասովոր ու օռիփնալ մէկն եմ, պիտի փափաքիք թերեւս հետաքրքրուիլ թէ ի՛նչ տեսակ կին մը կ'երազեմ:

Խնդիր չէ՛ թէ դրամօժիտ ունենայ կամ ոչ:

Դրամօժիտը այնչափ սովորական բան մը դարձած է, որ արտասովոր մէկը չպիտի յօժարէր երբէք դրամօժիտ ունեցող աղջիկ մը առնել:

(Բայց եթէ օրիորդը տասը հազար ոսկիի չափ դրամօժիտ մը ունի, կը յուսամ որ արտասովորութիւնս զիջում մը ընէ այս պարագային):

Իբր կին՝ կ'երազեմ աղջիկ մը, որ բա՛ն մը չգիտնայ, ա՛յնքան զգուած եմ շատ բան գիտցող աղջիկներէն:

Ու որովհետեւ բանաստեղծի սիրտ մը կը կրեմ, կը փափաքիմ որ անիկա ա՛յնպիսի կազմուածք մը ունենայ, որ պէտք չունենայ ուտելու՝ կերակրուելու համար:

Երբէք չքրտնի, ո՛րչափ ալ տաք ընէ, և ո՛րչափ ալ տեղ քալէ:

Քիթը չխնջէ ամենեւին, որովհետեւ անկէ աւելի գետնաքարչ բան մը չեմ կրնար երեւակայել աղջկան մը համար:

Ո՛չ մէկ երաժշտութիւն գիտնայ և ո՛չ մէկ լեզուէ հասկնայ:

Մաքրուելու համար պէտք չունենայ լուացուելու, ո՛չ ալ աղտոտնալու համար՝ փուռնա քսուելու:

Քսան տարեկանէ անդին չանցնի:

Կեանքին մէջ ո՛չ գլխարկ պահանջէ, ո՛չ ալ շրջագգեստ:

Ու եւ է կերպով գլուխ չարդուկէ ամենեւին:

Ամենեւին բերանը չբանայ խօսելու համար, որով այս կերպով միշտ գերծ կ'ըլլամ ապուշութիւն մը լսելէ:

Կը խնդրեմ որ գեղեցիկ ձայն ալ չունենայ, որովհետեւ աղւոր ձայն ունեցող կին մը ունենալու չափ ձանձրանալի բան չկայ:

Գեղեցիկ ալ չըլլայ շատ, ինչու որ ասոր անոր հետ մենամարտելու ժամանակ չունին:

Ջղային չըլլայ, վասն զի Ջղային կիներու չափ անտանելի բան չեմ կրնար երեւակայել:

Ո՛չ հայր ունենայ, ո՛չ մայր, ո՛չ եղբայր, ո՛չ քոյր, աղգական եւ ո՛չ բարեկամ:

×

Այն օրիորդները, որոնք կրնան գոհացնել այս պահանջուած պայմանները, կրնան դիմել Հանրագիտակի խմբագրատունը:

* * *

ՄԱՅԻՍ 1 . . .

Ինչիս այժմէական քոնիկագիրը պիտի ըլլայի եւ ինչ երեսով պիտի համարձակէի նայիլ ընթերցողներու երեսին, եթէ մայիս 1 ի առաւել զգայուն քերթուած մը չգրէի, ինչպէս որ պարտականութիւնն է ամէն ինքզինքը յարգող խմբագիրի, եւ պէ՛տք է զիսնալ որ ես խմբագիր մըն եմ որ ինքզինքս շատ կը յարգեմ, որովհետեւ . . . ուրիշները զիս յարգած չունին ամենեւին:

Պիտի փափաքէի որ քերթուածս ոտանաւոր ըլլար, տղերս տաղաչափուած՝ ինչպէս Հիւանդանոցի դարիպ տէրէրին զիրքը, բայց Աստուած, որ ամէն բան տուած է ինծի, բոլորովին զլացած է ինչ համբերութիւնը, որուն կը կարօտին ամէն անոնք՝ որոնք կ'ուզեն անպատճառ տար վանկով խօսիլ, հինգականով բաժնուած իրարու միջեւ եւ վերջաւորութիւնները իրարու յանգ եկող . . . :

Արդ, կը գոհանամ արձակով:

×

Մայիս 1 . . .

Ո՛հ, ինչ գեղեցիկ օր, ինչ խրոյախ բան, ինչ . . . et patati et patata!

Վարդամատն արշալոյս՝ բլուրներու ետեւէն . . . et patati et patata!

Երկինք՝ կապոյտ ու պայծառ . . . et patati et patata!

Ձեփիւռը կը փչէ մեղմօրէն . . . et patati et patata!

(Պէտք է նկատի առնել որ այս բաները միշտ կարելի չէ քսել, որովհետեւ շատ անգամ կը պատահի որ մայիս 1 ի առաւել անձրեւոտ օր մը կ'ընէ):

Ամէն մարդ մայիս 1ը կը տօնէ, սպասուհիներէն սկսեալ մինչեւ . . . սպասաւորները:

Աշխարհիս բոլոր կաթերը փողոց թափուած են:

Այսօր կաթ խմելը՝ երուսաղէմ երթալու պէս բան մըն է, կամ Զատիկին հաւկիթ ուտելու նման բան մը:

Թրամուէյները անգամ մայիս 1ը կը տօնեն՝ ծաղիկներով ծաղկազարդուած, միայն թրամուէյի ձիերը բան մը տօնած չունին, ընդհակառակը, սովորականէն կանուխ գործի սկսած են անոնք:

Ամէնուն ձեռքը վարդերու փունջեր կան. — վարդ չգտնողները բարաքեայով ալ կը գոհանան:

Կանուխէն՝ պարտէզները լեցուն են ամբողջով մը, որ մայիս մէկի արշալոյսին ծագելը տեսնելու բանաստեղծական գաղափարովը կուգայ և շատ անգամ . . . պաղ կ'առնէ:

Շաքարավաճառներու հոտած չորիկները այսօր կը ծախուին:

Բոլոր կիները փողոցն են, որովհետեւ մայիս ամիսը իրենց ամիսն է, քանի որ իրենք ալ ծաղիկներ են . . . (հի՛ն դիտէ):

(Չեմ գիտեր քեւայս նմանութիւնը հնարող ինչ է հասկցեր կիներէն, բանի որ ծաղիկները աղէկ կը հոտին, մինչ կիները . . . գե, մանաւանդ այս տարեւոյն):

Տուներու դռներուն վրայ մէյմէկ ծաղկեպսակներ կախուած կան, որոնք մտածել կուտան թէ՛ օրին մէկը . . . մեր գերեզմաններուն վրայ ալ ասանկ ծաղկեպսակներ պիտի զետեղեն:

Տօլմայով Բեալըստանէ գացողներ ալ կան այսօր, ինչպէս շատ անգամ գրած է բարեկամս Վահան Փափագեան, այդ ճիւղին վարպետը:

Որչա՛փ տղաքներ սովորականէն կանուխ արթնցած են այսօր, իրենց պաշտելին երեսը տեսնելու համար Թաքսիմին պարտէզը կամ . . . Լեւոնին սրճարանը:

Շուկացիներու անգամ բանաստեղծական տամարը բռնած է այսօր, և երկու վարդով ետէ քսքանքսի տերեւներ բռնած կ'երթան իրենց դործին:

ՖանՖար մը կանուխէն աշխարհիս բոլոր ֆու-նօքերը կը զարնէ՝ մայիսի ամբողջ ներդաշնակութիւնը խանգարելով:

Կառապաններու քիթը վեր է այսօր և վիճակահանութեան առաջին պարզեւը շահած մարդերու սուրաթը չինած են անոնք, որ դեռ երէկ իրիկուն 4 1/2 ժողը Ղալաթիայէն մինչեւ Շիշլի տանելու պատրաստակամ էին:

Մայիս, ինչ հմայիչ ամիս . . . : Մայիս, ո՛հ . . . : Մայիս, ա՛հ . . . : Մայիս, է՛հ . . . : Մայիս . . . :

(Վերջ արձակ ֆերբուածիս)

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ



ԷՆԹԵՌՎԻԻ ՄԸ Ե. ԹՕԼԱԻՆ ՆԵՏ

Օրը կիրակի՝ ժամն ալ գիշերուան չորսն է (Ը. Թ.): Զուլթակի դասատուէս՝ Յ. Սի- նանեանէն դարձիս — ինչպէս ամէն Բերացի — սանկ անդամ մը Սրբանտիտէն ներս կը նա- յիմ: Ոչ բաղմութիւն ըսելու չափ չատ, ոչ ալ թափուր ըսելու աստիճան անյաճախորդ է սրահը: Շաա'ր Տուր Լը պլանին, ոմանք՝ Սինեմաթօկոաֆի, և ո' գիտէ ուրիշներ՝ Բերա- Պուֆէին որ ծաղիկին վրայ դացած են թա- ուիլ, je m'en fiche !

Մարդ տեսնալու փափաքէս աւելի՝ օռաց- ժափի մը պապակս գիս՝ petit tours à droite մը ընել կուտայ ու ներս կը մտնեմ, անոն- գիստ ընելով կառսօն մը, որ ձեռքը պոս- սեկաին գրպանը թեթեւ մը մը կը քաշէր կռնակը սիւնին տուած:

Հեռուն sale à mangerին խորը, բաղնիքէ ելած գէմք մը կը նշմարեմ, գէմք մը՝ որուն վրայ մազ ըսուած բանը չիկայ ... բացի գլխէն:

Թօլան է, կը բացաքանչեմ, այնպիսի թօ- նով մը՝ որ հաւատացէք երբէք չպիտի հա- նէի երբ գային ինձ աւետել թէ՝ ... եեռլի տօմաքեւը ելած է, entre nous, այս վերջինը ալ աւելի կը սիրեմ ... franchement dit:

Եւ որովհետեւ մենք՝ Պէյօղլուցիներս, սո- վորութիւն ունինք կէս գիշերը ժամ մը ան- ցած մտնելու վերմակին տակ, ուստի այդ ժամանակամիջոցը սատկցնելու համար օրուան միմոսին մօտենալէն ուրիշ ճար չկար:

Ու գացի:

— Tiens, bon soir, ըսաւ իմ և Զեր կալ- ուջը, և գլուխը վեր առնելով՝ աչքերը և յօնքերը անանկ մը խաղցուց որ անմիջապէս հասկցայ թէ «այ ... քեզ ո'վ պիտի մտիկ ընէ ...» մը անցաւ մէկ թիւ մեքենայուած մազերուն տակէն:

— Զբաղած կերեւաք ըսի, դեռ տիտիկ չըրած, մինչ ինքը դպրոցական տանոց թըղ- թի թերթերէն մէկ քոնին ճմութիւնով գըր- պանը կը դնէր ... միշտ յօնքերը վեր:

— Ընդհակառակը, սիրելիս, կրկնեց, ես ալ մէկը կը փնտռէի կոր ...:

— Անշուշտ խօսակցելու ... ընդմիջեցի:

— Ո՛չ ... քաֆե-կլասիս դրամը ցնծալ տալու համար ...:

—

Իրար հասկցած էինք, և նստելու համար խորհելու հարկ չի տեսայ:

— Թօլա' ... քանի որ քաֆէ կլասը վը- ճարելու ստիպեցիր, կուզեմ օգտուիլ քենէ այս իրինկուն, խօսք առի՝ ջուլթակս և ձայ- նագիրներս մէկ կողմ դնելով:

— Բարոյապէս մեծ օգուտներ կրնամ տե- ղալ գլխուդ, ըսաւ՝ կէս լուրջ շեշտով մը, իսկ եթէ նիւթապէս ... ը' ... ը' ...:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, անհոգ եղիր, փոխան պարզ մէկ քաֆե կլասիդ՝ զոր մարսած ըլ- լալու ես մինչեւ հիմա, մէկ քանի հարցում- ներ ունիմ, որոնց պատասխանները եմքեռ- վիուի ձեռով հրատարակութեան պիտի տամ:

— Ո՛ր թերթին մէջ, հարցուց զարմաց- մամբ:

— Բիւզանդիոնին:

— Անցիր ըսաւ, սալօնին վերերը պտըտ- ցընելով իր չիլ աչքերը:

— Էյ չէնէ Արեւելին տամ, ըսի:

— Զեն տպեր:

— Մանգումէին, ալ ըսելիք չունի'ս ես:

— Աման շաբաթ օր մի տար, հացէս կըլ- լամ ... խօսք առաւ քիչ մը ժպիտ շինելով անիւնած չրթներուն քովերը:

— Հա՛ւ, Աւեսաբեհին:

— Վարժարանը կրօնքի դասերուս միշտ գէնօ առած եմ:

— Մասիսին:

— Կեղև, կոր քի, շատոնց է բռնկել տեսած չունիմ . . . :

— Լոյսին:

— Մեղիպէսներուն տեղ չիկայ . . . continuez:

— Փունջին:

— Աղէկ միտքս ձգեցիր, Սիմոնիկը կաթէն կտրեցին արդեօք . . . :

— Հասկցայ, Հանրագիտակին մէջ պիտի ուզես որ դրուի . . . Հանրագիտակը որ օրօրանդ է:

— Օրօրանս էր, balancoirս է, և կարծեմ թէ հեռու բերնէս՝ դազաղս պիտի ըլլայ:

— Ուրեմն, պատրաստուէ հարցումներուս՝ Esprit êtes vous là ?

— Ատով մի սկսիր, որովհետեւ Տուր լը Պլան խախկ եղաւ:

— Հոգ չէ, կսկսիմ կոր, երգիծարան մը ըլլալդ բան մը աւելցուցած է քու մէջդ:

— Կողիս ոսկորը՝ որ հազարաւոր տարիներ առաջ փոխ տուած էի կնոջ, ետ առած եմ այդ տիտղոսով, ահա ինչո՞ւ կինները միշտ կը նախանձին ու չեն քաշէր . . . , չի մոռնամ ըսելու որ այն էրիկ մարդիք որոնք նոյնպէս դիս չեն քաշէր . . . կիններէ վար տեղ մը չունին . . . :

— Օրուան գորղներուն վրայ ի՞նչ է ձեր կարծիքը:

— Քասիմը կը կարգամ՝ երբ յափրացած աշխարհային զեղիս կեանքէս մխիթարուելու, ուղղուելու պէտքն զգամ, Ե. Տէր-Անդրէասեանը՝ երբ զգամ թէ տակաւ Աստուծմէ հեռանալու շաւղին մէջն եմ մտեր, Տէր-Յակոբեանը՝ երբ ամուսնանալու փափաքը ունենամ և գիտակ ըլլալ ուզեմ զաւակներուս կրթութեան ճամբան, Ալփասլանը՝ երբ սոխակներու ձայնէն ներշնչուիմ և հասկնալ ուզեմ անոնց լեզուն, Արամ Անտոնեանը՝ երբ մէկուն հախեն զալ ուզեմ և տկար զգամ ինքզինքս, Ալփիարը՝ երբ կէս գիշերին վաւաչոտ երաղէ մը արթննամ, Միրիճան Պարսամեանը՝ երբ սիրային նամակ մը գրելու համար տող մը բան չգտնամ ըսելիք, Վահրամ Թաթաւը՝ երբ քնանալու պէտքն զգամ և աչքերս չի յօժարին դոցուիլ . . . նորէն բացուելու համար անշուշտ, Միսակ Մեծա-

բեցը՝ երբ պոյէս վեր բաներ մը հասկցնել ուզեմ, Ենովք Արմէնը՝ երբ քրքրեալներու վարժապետութիւն ընելու հարկին մէջ գրտնուիմ, Չիֆթէ-Սարաֆը՝ երբ շուներու կզուրճուէր խոր տպաւորութեան մը տակ թողուղիս, Արտաշէս Յարութիւնեանը՝ երբ կօշիկներս նեղեն, և Միհրան Ուղըրլեանը՝ երբ առտուները . . . պէտքը զգամ:

— Լա՛ւ ըսի, շարունակելով հարցումներս:

— Ի՞նչ առաւելութիւն կը տեսնաս կնոջ վրայ, որուն ետեւէն աշխարհ կը վազէ . . . :

— Մագնիսի կտոր մը, հանէ անիկայ ահա կինը մառկութիւններու պէս, ոտից կոխան պիտի ըլլայ՝ սիրոյ փոխան:

— Ըսէ տեսնեմ թօլաս, երբ ամուսնանալու ըլլաս ի՞նչ տեսակ կին մը պիտի ուզես առնել:

— Գեղեցիկութիւնով Սպանսօլ, երազային աչքերով, Բառիզիէնի մը պէս չիք, Յոյնի պէս լեզուանի, և հայու կնկան պէս . . . Էլլիսայախլը:

— Ո՞ր լեզուները կը սիրես ընդհանրապէս:

— Սիրաբանած ատենս Փրանսերէնը կուզեմ գործածել, կերած ատենս Անգլիէրէն (որովհետեւ բնաւ չեմ խօսիր), պարած ատենս Յունարէն, և բաղնիքը՝ լուացուած տեղս . . . Հայերէն:

— Ի՞նչ կարծիք ունիս եռաձայնին վրայ, կը հարցնեմ, օգտուիլ ուզելով օրուան քրօնիկագրին թուրքերանութենէն:

— Ինչ որ նոր է գեղեցիկ է ինձ համար, և ինչ որ գեղեցիկ է, կարծեմ թէ չի հաւնուելիք չի կրնար ըլլալ, չեմ գիտեր թէ եռաձայնը գեղեցիկ է . . . :

— Ամուսնանալու փափաք ունի՞ք և կուզէ՞ք կապուիլ:

Թօլա, աչքերը խոշոր խոշոր բացած պահ մը երեսս նայելէ վերջ,

— Կը տեսնեմ որ պղտիկ պղտիկ espritներ մը գլտորել կուզէք կոր, bravo ! ամուսնանալը տարբեր է սիրելիս կապուիլը տարբեր: Երբ Բերօթ մը կին մը առնէ՝ կ'ամուսնանայ, իսկ Գուժ-Գաբուցին երբ կարգուի . . . կը կապուի: Կը փափաքիմ ամուսնանալ այն օրիորդին հետ՝ որ ամբողջ Բաքիլ Մեհստի գործերը գոց գիտէ՝ Իսրայէլացոց ծովէն

անցնելու պատմութեանը պէս, և օրուան կէս
ժամը միայն հասկցնէ ինծի թէ՛ կարգուած
եմ, ma parole! օրը ամբողջ իրեն կը ձգէի:

— Ի՞նչ տարբերութիւն կայ քու, Ալփիա-
րին և Լիլաին միջեւ:

— Ալփիար՝ կարգացածը կը գրէ, ես՝ լը-
սածս, Լիլա՝ տեսածը:

— Ի՞նչ տարբերութիւն գտած ես դերա-
սանին և գրագէտին միջեւ:

— Գրագէտը ցիկանն է, իսկ դերասանը
կապիկը, ան կը գրէ՝ միւսը կը խաղայ:

— Վերջին հարցում մ'ալ սիրելիս, ի՞նչ
բանէ կը վախնաս է՛ն շատը:

— Մտքէս անցածէն, թէ չըլլա՞յ որ խը-
մած օռնամասիդ դրամը ինծի տալ տաս...:

ԳՕՊՈՒԱ

ՏԻՐԱՑՈՒՎԱՐԺԱՊԵՏԸ

ԼԻԼԱԻՆ

Հոս գիւղի մը մէջ կայ ուխտատեղի,
Թաղականով բարի, քարոզչով արի,
Կայ մի վարժապետ տիրացու աղա,
Բայց մի՛ հարցնէր քե՛զիս սա նա:

Խուրսավաքնի եր, եղաւ վարժապետ,
Տղոցը վրայ վերակացու պէս,
Եթէ քես, գիտէ՛ շարական, նօթա,
Աս մի՛ հարցնէր, քո՞ղ տուր որ երբայ:

Դպրոցին մէջ ալ պաշտօն տուած են,
Տղոց դասերը ասոր յանձնած են,
Բայց պիտի քես՝ ճե՛կ կարո՞ղ է սա,
Աս մի՛ հարցնէր, քո՞ղ տուր որ երբայ:

Ժամուն տեսերներն են իրեն պաշտպան,
Եղած են իրեն վրան պահապան,
Բայց անդին տղան ի՞նչ ըլլայ ըլլայ,
Աս մի՛ հարցնէր, քո՞ղ տուր որ երբայ:

Ամսականն քես, չորս հարիւրի մօտ,
Ըլլալով հանգեւծ՝ չը գիտնայ ամօթ,
Ձայնագրութիւն եւայլն ինչ որ պէտք է նա,
Աս մի՛ հարցնէր, քո՞ղ տուր որ երբայ:

Ժամուն մէջ քես, կարգացուած չունի,
Շարական քես, հիշ խապար չունի,
Անո՞ւնը կուգես, վարժապետ Ա. Զա.
Բան մըն է կերբայ, քո՞ղ տուր որ երբայ:

ԱՆԹԻՄՈՍ ԾԱՌԱՅ

ԴԱՐԱՍԿԶԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Թ

Թաւսոն. — Տեղ մը՝ ուր թէեւ մտնելու
համար մուտք պէտք է վճարել, սակայն երբ
կարծրադիմամորթ ըլլաս՝ կրնաս առանց
մուտքի ալ մուտ գործել:

Թաղական. — Թաղին ականաւորը:

Թուական. — Երբ տարիքի չուրջ դառ-
նայ՝ կրննորուն երբէք մի հարցնէր, եթէ չեօ
ուզեր գեղեցիկ սեռին տգեղ երեւնալ, բայց
երբ կուգես տարւոյն, ամսոյն եւն. թիւը
երբէք չի մոռնալ, տոկոսով ստակ առ, եթէ
գտնես կամ եթէ տան:

Թուղթ. — Եւեփայի պէս բարակ ու
կարծր թերթիկ, որ իր գործածութեան բաղ-
մապիտի եղանակներուն մէջ՝ նաեւ Հիւան-
դանոցի հասոյթները կը բաղմապատկէ, վա-
ճառականներու ապրանքները կը կրկնապատ-
կէ, իր միջոցաւ առնուած դրամներուն տո-
կոսները կեռապատկէ, սիրաբաններու սէրը
կը քառապատկէ, շատ մը ինքնակոչ փառ-
տաբաններու օրական բեռը կը կաղմէ, եր-
բմի օգտաշատ, գիտական, իմաստասիրա-
կան, բանասիրական, փիլիսոփայական, լեզ-
ուաբանական, մտադարձական, և տակաւին
շատ մը ... ական ական, ու իմաստալից
հանդէսները իր բացակայութեամբը սքօրեռ-
կ'ընէ:

Թարմ. — Ամէն բանի մէջ յարգելի, իսկ
կնոջ ու հաւկիթի մասին յարգելագոյն, քա-
նի որ մին մարդուս առողջութեանը, իսկ
միւսը՝ հիւանդութեանը պիտանեգոյնեն:

Ժ

Ժամակոչ. — Մարդ մը՝ ուրկէ միջրոպ-
ները կը սոսկան:

Ժամանակ. — Ամէնէն շատ պարապ մար-
դիկներն են որ չունինք կըսեն:

Ժամնախոս. — ... Տես (անկուտիութիւն):

Զմաւ ածեց

ՌՈՄԱՆՈՍ

Ա. զն. Գէորգ պէյ Փափազեան՝ Ընդ. Արկ-
զակալ առաջնակարգ վաճառական՝ Մանիսա-
լեան եղբարց ի Բէօսթէնէ, որ տկարութիւնը
դարմանելու համար Կ. Պոլիս կը գտնուէր,
անցեալ չաբաթ Ռուսական շոգենաւով իր
գործատեղին մեկնեցաւ:

ՄԱՅԻՍԻ ՃԼՎԼՈՒՔ

Տարուան մէջ չկայ ամիս մը՝ որ Մայիսին չափ սիրուած ըլլայ կենդանական աշխարհէն, բոյսէն մինչեւ մարդը:

Մայիսին է որ վարդը կը բացուի, ոչխարը կը ծնի, սոխակը կ'երգէ, հողը կը կանաչնայ, ծառերը կը հագուին, աղաք կը բազմանան, օրիորդներու այտերը կը կարմրին, տիկիներն՝ րու դէմքին փոթերը կանհետին, տղուկներ՝ անխոստովանելի վայրեր կը սողոսկին, կաթը ստամոքսներ կը յարդարէ, և որ աւելին է՝ նշանած զոյգեր թաւուտքներու տակ զիրար կը համոզեն թէ երբէք և երբէք ուրիշի գէշ աչքով չպիտի նային մեծ ԱՅՈՒՆ վերջ:

Չաւեշտագիրի մը համար Մայիսի յօդուած մը գրելը այնքան դիւրին է՝ որչափ դիւրին է գաւաթ մը վճիտ ջուր խմելը՝ խնդեցնող օրիորդի մը ձեռքէն:

Եւ որովհետեւ այս տարի մայիսը հինգշաբթիէն սկսաւ, ուստի ամէն անոնք՝ որոնք սովորութիւն ունին անպատճառ այդ ամիսին առաջին օրին բէշերնին վեր առնելով իրենց մարմինը բռել կանաչներու վրայ, կիրակի կատարեցին իրենց ուխտը, գեղեցիկ օգով մը Պոլսոյ արուարձաններուն մէջ:

Հաւատացէ՛ք, եթէ Աստուած մեղք չի համարէր և օրէնքն ալ թողատու ըլլար, շատ դիւրին պիտի ըլլար ինձ համար թալլել տուները, սովթել ինչքերը այն պարապ տուններուն՝ որոնց աէրերը կանուխէն, շատ կանուխէն ցրուած էին հոս հոն, բնութեան ծոցը:

Ինծի չափ հետաքրքիր չէք կրնար ըլլալ, հասկնալու համար թէ՛ ինչ անցաւ դարձաւ մայիսի կիրակին, եթէ սէրին տեղ մը նստած էք և տրամադիր, պատմեմ:

Մինչեւ հիմա չէի գիտեր, բայց կիրակի համոզուեցայ թէ քարեքեր հողը ներկայ մայիսին ինչե՛ր կ'արտադրէ եղեր: Կանանչ դաշտերուն և լեռներուն վրայ մարդ-ծաղիկներ գոյնզգոյն, որոնց մէջ տգեղ, աղուոր — ճաշակի խնդիր — բոլորն ալ կրնաս գտնել, եւտի վերէն վարդերէն մինչեւ ըսրողան օքի կամ այլ չիչիկներ, որոնք սրիւտուած են նաքիւռել անխնամ դիրքերու մէջ:

Մէկը որ կին էակէն գանիւ կուզէր՝ թող ինծի հետ գար, սրլըքաւալ անցեալ կիրակի այն տեղերը՝ ուր հնիքն պոյունա փռուած էին, ան իրենց է՛ն սիրտ խառնուող ձեւերովը, ամառնային քաղաքաւան թուալէթներով, որոնց շնորհիւ մեռաւիլ մէկը շատ լաւ պիտի կրնար զանազանել, խառնամեղ (°) մարեան, խրվրոնքիսը և ... քէյիմ:

Կարծեմ թէ մայիսի վրայօք այսքան մը գաղափար տալէ վերջ կարգը բուն նկարագրականին եկաւ, ուստի՝ ունա՛, օօ՛գ, քո՛հ՛գ...

Ինչպէս ամէնքդ ալ գիտէք, մայիսին առաջին օրը կամ կիրակին, կիներ կան որոնք կորդնոտին կարծես, և անպատճառ երկու չըխըն կապելով չայիւր կելան, չեմ գիտեր ի՛նչ ֆիզիքական առաւելութիւն տեսնելով ասոր մէջ, որ մեր Տիբլումի բժիշկները չեն յաջողած կուսնել:

Ահա նոյն այդ մտածումը գործադրող ընտանիքներ էին, որոնք կանուխէն եկած տաւրածուած էին խոտերուն ու կանանչներուն վրայ լեռանը ստորոտը, ուրկէ ամէն դի կերեալ:

Հոն ընտանիք մը, հոս ընտանիք, անդին ընտանիք, ասդին ընտանիք, քիչ մը անդին ընտանիք, քիչ մը ասդին ընտանիք, վերջապէս ամէն կողմ ընտանիք, գետնի վրայ ընտանիք:

Գառնուկի խորովածի հոտը խառնուած որթատերեւորինձաբաթութիւն (հո՞ս ես թէ ողիկ), պարապ ստամոքսները քօսէնէն ղուրս կը նետէին այն կարգ մը օրիորդներուն՝ որոնք կուշտ փորի քօսէ չի դրուիր ըսելով՝ ծոմ դուրս ինկած էին առաւօտուն, և բոլոր տարեցիները կերակուրի պատրաստութեամբ կզբաղէին, ինչպէս էրիկ մարդիկ ալ Բադոսի խնկարկութիւն, ուր այդ տեսակ տեղեր աւելի լաւ կը մատուցուի:

— Օխօր օխօր, ըսէ Մանուկ աղա, սանկ չորս դիդ նայէ սիրտդ բացուի, կըսէ տիկինը ամուսնոյն, որ ան ալ իր կարգին ժաքէթը ծառէն կախած, ոտնամաններն ալ հանած բռուած էր խսիրին վրայ:

— Ես սիրտս պանալու պէտք չունիմ,

իշտէ դուք բացեր էք ես ... հազար ան-
գամ ըսի քի, տա աղջիկներուն կէօքսէրը
կոց չինեցէք տէյի, դուք ինատընա այնա
պախան դառցուցիք ...

— Տէր Աստուած ... չըռող զաւկներ
չեն քի կոցեմ, մահալլէպի են մահալլէպի ...

— Աղէկ ամա, շատ պացը մնան նէ սու-
լանմիշ կըլլան ...

— Դուն զէֆքդ նայէ, ինչո՞ւ պէտք
Մանուկ աղա ... չօք չէ՞յ ... ասանկ բա-
ները մօր մը նայելիք բաներն են, փառք
Աստուծու տահա չինչեցուցի ...

— Դուն չինչեցուցիք ամա, էկէր երկու
հոգի գան տէ պալթա ըլլանն նէ, ես պիտի
ինչեցունեմ, անանկ կերեւայ կոր ...

Նոյն պահուն օրիորդները՝ որոնք երկու
քոյր էին, կը ժօտենան,

— Տուտո՞ւ, մենք խառապաւ ժողովել
կերթանք կոր ...

— Էյ եալրուս, քի մը կեցէք, հացեր-
նիս ուտենք տէ ետքէն կերթանք ...

— Կերած խած ինչպէ՞ս կըլլայ, հիմակ-
ուրնէ քօռսէս կը ճաթի կոր ...

— Քա աղջիկներս, ձեզի ըսի քի ասանկ
տեղեր խուռէ ֆիլան չեն դնէր տէյի, իս
մտիկ չըրիք, հիմակ ալ ճաթեցէք քի սորվիք:

— Քա՛, սանկ նայէ ովեր կուգան կոր,
կըսէ մեծ աղջիկը, խնդալէն ձեռքերը ծափ
զարնելով:

Եւ իրօք այր կին թիւով եօթը հոգի իրենց
կողմը կուղղուին:

— Էյ բաթլամիշ ըլլաք, սա նայէ կնքա-
մօրս թախըմը, ծունը գլխուս ... Մանուկ
աղա սանկ նայէ մէյ մը:

— Քա ասոնք եաղլըշ եկեր են, օրերնին
ալ շաչըրմիշ են ըրէր, սըւոնց գէմը ելիք տէ
ըսէ քի, հոս ֆրկիչին պախճան չէ, Համբար-
ձուսին օրուան պախ քէնտինէ սուֆուան չէ
տէյի ...

— Սուս ճանըմ, պաղ պան մընէր, կայ-
նէ նայինք, ըսելով կը դիմաւորեն:

— Աչքերնիդ կը պաղէ՞ր կոր ... իշտէ
ասանկ մարդը կուգան կը կոխեն ...

— Էյ բարով եկաք ... աս ուրկէ՞ ուր ...

— Քա չիտակ տուններնիդ եկանք, պա-
խալին մանչը ըսաւ քի, սէլէներով չայիք
ելան տէյի նէ, ո՞վ խնդեցեր է քի ետ դառ-
նայ, պիր սօլուխ ելանք եկանք ...

— Էյ բարով եկաք, աղէկ ըրիք ...

— Կայնէ քեզի բռնզանդէ ընեմ, կըսէ
ու կնքամարը կսկսի ներկայացնել, ախպարս,
ախպորս կնիկը, աղջիկը, միւսիւ Թացքէշ-
տիմալեան, պէլքի լսեր էք, խազէթաներուն
մէջը բանաստեղծութիւններ կը գրէ, աս օ-
րիորդն ալ անոր քոյրն է, մեր դրացիներ-
նին, աս ալ աղէկ կնիկ մըն է հոռոմ է ամա,
քրոջ պէս ենք տէ, ուղեցի քի հետ առնեմ
տէյի, էրիկը ձգած է, երկու չօճուխով կէնճ
կէնճ որքեւարի մնաց ...

— Շնորհակալ եմ, Մանուկ աղան ալ
տիօր խանտրմիշ ըրինք առինք եկանք նէ
օխտը հալանին տիպը ինկաւ, գլտեմ ես,
քի մը ծանրը տիպ է ...

— Բարի լուս Մանուկ աղաս, սուֆուադ-
չէն ըլլայ, ճապալ ինչ համով հոտով մանճա-
ներ շտկեր ես ... մինա՞կ պիտի ուտէիր ա-
տոնք ... հիշ միտքէդ չանցուցի՞ր քի կըն-
քամար մը ունիմ տէյի ...

— Ասծու բարին կնքամար ամա՛, աս
տարի քէօքիւդ կիւպրէն ճուրը պօլ են տուէր
տէ տալ պուտախլանմիշ ես եղէր ... բա-
րով եկար ...

— Հա՛հ, հա՛հ, հա՛հ ... քա աս կէնէ
ան գիտցած ճառիսս է ...

— Սուս եղիր քուրուկ սուս, պաղի ա-
նանկ լաֆեր կընէ քի բէշիս չէնկէլ կոճակը
սըկէ հունա կը թռի ..., Էյ նստեցէք նա-
յինք ... կըսէ տիկին Ուսկուկ, պղուզին
թիւերը վեր քաշելով:

— Հրամայեցէք նայինք, ասոնք եապանճի-
չեն, օթուր քիռիա Ասպասիա ... կըսէ կըն-
քամարը գլխարկը հանելով և չորս դին նա-
յելով, որպէս զի տեղ մը կախէ ...

— Ախ, տուր տուր, կնքամարս, նա՛
մերիններուն քովը դնեմ կըսէ օրիորդ Սըր-
բուհի, Մանուկ աղայի մեծ աղջիկը, որուն
աչքը Թացքէշտիմալեանին վրայ մնացած էր:

— Քալէ թի քալօ մէռօս ինէ, թի օռէա
մա թի օմօնֆօ ...

— Էցի ինէ մաթեամու, կըսէ կնքամարը
և ասդին դառնալով, նայեցէք ինչ կըսէ
կոր, աս ինչ մարդավարի ընտանիք են,
բէք սիրտս սիրեց ասոնք, Մանուկ աղային
համար ալ ինչ թէրպիչի չէն մարդ է կըսէ
կոր, կը թարգմանէ որպէս զի դիտողութիւն
չընեն օտարուհիին համար:

— Ան իրեն զաթութինն է ... խօսք կառնէ տիկին Ուսկուկ, և անմիջապէս տեղէն ելլալով՝ Մանուկ աղային քովը կերթայ ու ցած ձայնով,

— Մանուկ աղա, խուզին քիչ պիտի գայ, տղման պօլ եմ դրեր, հաց կուգէ, քիչ մըն ալ չէրէզ, չըռող, բանիր, էլի բօթիններդ հագի տէ գնայ առ, օղարսագ կըլլայ կոր, չընայիս ամէնուն ալ աչքերը խալխալանմիչ է եղեր անօթութենէն ...

— Ինծի նայէ կընիկ, հիչ սէլէները մի քակէր, հարցունեննէ, քիչ մը նստինք պաղ-նիք պիտի երթանք ըսէ ...

— Քա ճանրմ, կիրակի օրով կնկան պաղ-նիք կըլլայ մի ... էրիկ մարդ կառնեն ...

— Աս օր Մանուկը խաբու խաբամայ պունեց, խառըչըս պիտի մտնանք ըսէ կնիկ ...

— Խելքիդ եկա՞ւ ճանրմ ... ըռեզիլ ըլ-լանք ...

— Դուն պաղնիք չես մտնար նէ ես մէ-ղառը կը մտնամ ... քա անտար հէռկէլէին ինչ պիտի հասցունես ...

— Դուն ուտելիք հասցուր, ես լախըռտը կը հասցունեմ ...

— Քա ատ զօռ պըյըն միւսին ինչ է քի թիւթիւն քէսէսիի պէս առէր եկեր են ... ատ ով է ...

— Սուս ճանրմ, խազէթային մէջը պան կը գրէ եղեր, գրող կարգացող է եղեր ...

— Ատ հէրիֆը բերելուն աչճի մը բե-րէին տէ փորերնիս կշտացունէր պարէ ...

— Ինծի նայէ Ուսկուկ քուրիկս քեզի ըսեմ, ես գիտեմ Մանուկ աղային ճէօմէր-տութինը, հիմա կըլլայ միսաֆիր եկաւ տէյի էվէլ էվէլօք մասրաֆները կը թաթխուի, եանի մենծ պոյէն կիւճէնմիչ կըլլամ, ըսեմ տէ ... հէլպէթ խուզի քէպապի մը ունիք, տոյմա ալ դրած էք, հէլվա մըն ալ կոխած ես գիտեմ, չիւնքիւ մէռաքըլը ես, իչտէ՛ պու, Մանուկ աղաս թուրֆանտաճի է, հէլպէթ չիլէկ ալ առած է, եղաւ զնաց, անանկ ֆիս-քոս կընէք կոր նէ ելլանք երթանք ...

— Կիմանաս կոր քա՛, հարսնիք բռնե-րն հէրիֆները, ինչ խալթ պիտի ուտենք ...

— Ինծի նայէ, հիմա դուն գնայ չորս օխա միս տահա առ, քիչ մըն ալ չէրէզ չըռ-կէ, մէկ երկու օխա ալ հաց, պաշխա պանի մի խառնուր ...

— Ես գիտնայի գլխուս գալիքնէ, տա-սը հատ մը հետս կառնէի ...

— Ինչը տասը հատ հետ կառնէիր ...

— Սիւլիւկ, ինչ պիտի ըլլայ, չի նայիս արուեններս խաֆաս ելաւ ...

— Էյ աման Մանուկ աղա, խըռսըդ պիւէ մայիսը է ...

Նոյն պահուն միւսիւ Թացբէշտիմալեան գլխարկը հանելով ու կոտրտուկով Մանուկ աղային գէմը կուգայ կը կենայ, ու՝

— Բանասեղծական ցերկայ ամիսին Ուր վարդ ու սոխակ կերգեն սեւ կուսին Թացբէշտիմալը պարսֆ ունի ուսին Ներկայանալ ձեզ յարգանօք ոչ սին :

— Հէ՛ ... կըսէ Մանուկ աղա, աչքերը չանախ չանախ բացած :

— Մանուկ աղա, մեր միւսին բանաս-տեղծ է տէ հիչ տիւզ չի խօրաթէր, բիւթին ոտանաւորը կը զուրցէ, իչտէ եկաւ տէ քիմ պիլիր, ես ալ բէք աղէկ մը չի հասկցայ ամա, ինքղինքը քեզի բռէղանթէ կընէ կոր ...

— Հա՛ ... վախս ինչ էր, ես ալ գիտ-ցայ քի հավան պիրտէն պիտէ սէրթ եկաւ տէ ... քիմ պիլիր, հիւանդութին ըսածդ կուգամ կոր չըսէր ... կըսէ Մանուկ աղան, ալամայ կոշիկները հագնելով :

— Ինծի նայէ Մանուկ աղա, չափուի ե-կուր, ուչ չի մնաս ...

— Քա ամս ինչ է ուր կերթայ կոր կըսէ կնքամայրը ոտքի ելլալով ...

— Հիչ հիմա կուգայ ... սըտեղէն պա-կաս մը պիտի առնէ տէ ...

— Իչտէ աս չեղա՛ւ ... է՛յ ... տեսար մի հիմա եղածը, ինչ կար նէ ան կուտէինք կըլլար կերթար, կըսէ կնքամայրը ...

— Մենք մեզի հոս եղածը ուտէինք տէ հրամանքդ ալ բապուճներս ուտէիր նէ չէր ըլլա՞ր, ըսելով Մանուկ աղա ճամբայ կեցայ, չի մոռնալով խրատել իր կինը, որպէս զի աղջիկները Թաց բէշտիմալին չի փաթթուին ... կը պաղին ետքէն :

Մինչ Մանուկ աղա հազար հայհոյութիւն-ներով կը հեռանայ իրենցմէ, ասղին միւսիւ Թաց բէշտիմալեան իտես գեղջուկ և կաթ-նաթոյր օրիորդներուն, իրօք բէշտիմալը քա-մելու աստիճան կը թըջէ, ու կսկսի ծուրիկ ծուրիկ մօտենալ :

— Կը սիրէ՞ք մայիսը օրիորդ, ինչ որ վստահ եմ ...

— Հապա՛, խրոյս կը սիրեմ, կըսէ Սուրբիկ, որ պզտիկ քրոջմէն առաջ իրեն հետ խօսելուն՝ grandiose մը կարտայայտէր, գետնի խոտերուն չիւղի մը հետ խաղալով։

— Իրօք, մայիսը սրտին ամիսն է, հոգւոյն ամիսը, սիրոյ ամիսը ... այնպէս չէ՞ օրիորդ, ուր մարդս կը ներշնչուի, կը վերանայ, կանչանայ ...

— Չիյտեմ ամա, ես մայիսը անոր համար կը սիրեմ քի մառուը առ ամիսին կելլայ չիւնքիւ ...

— Ա՛հ ... հազարէն աւելի հազար գեղեցկութիւններ ունի մայիսը օրիորդ, որ ստամոքսէն աւելի սրտին հետ կապակցութիւն ունի, այս վայրկեանիս ձեր մէջ բան մը չէ՞ք զգար ...

— Հապա՛, քիչ մը առաջ սանձի մը ըրի սանձի մը քիւմ ... պաղռուսներս դուրս պիտի թափէին քիչ մնաց ...

— Որչա՛փ ... պարզ, սակայն որչա՛փ նախընտել գեղեցկութիւն մը ունիք օրիորդ, որ ձեր ամբողջութեան վրայ շատ բան կաւելցնէ ... ձեր աչքերը շատ բան կը խօսին, ձեր սրտին մաքրութեան և հոգւոյն բարձրութեան վրայ ...

— Ա՛ֆ կընես միւսիւ, ինչ բան է չիյտեմ, կը հասկնամ կոր քի աղւոր բաներ մը կը զուրուցես կոր ամա ... ինչ գիտնամ, ես սէպէ քի շատ պզտիկ եղած ատենս հարըս իս դպրատունէն հաներ է տէ, զիհնս չառնէր կոր ...

— Հոգ չէ օրիորդ, սէրը կըթուլեան պէտք չունի, անիկայ իր բնական վիճակին մէջ ալ աւելի նախընտրելի է, մանաւանդ ...

Նոյն պահուն տիկին Ուսկուկ կը ձայնէ,

— Սուրբուհի՛ ... եկուր սա չըռողները կրակը խօթէ տէ սալաթան շինէ, հարըդ ո՛ւր է նէ հիմա կուգայ ...

— Ա՛ֆ կընես միւսիւ, երթամ չըռող սալաթասի պիտի չինեմ ...

— Ա՛խ ... օրիորդ, կերդնում որ կեանքիս մէջ առաջին անգամը ըլլալով կզգամ, ինչ որ պիտի զգայի իտեալիս առջեւ ...

— Մէտէդ կուզէ կոր նէ ատկէ ալ առնել տանք, հիմա մամայիս կըսեմ չըբըն իշի առնել կուտայ, ամա չըռողն ալ տաք տաք աղւոր կուտուի ...

— Իտէալս օրիորդ, ուսկիք բան մը չէ, ներեցէք ... գաղափարականս ըսել կուզեմ, այն՝ որուն կը ձգտի հոգիս, միտքս, սիրտս...

— Ա՛ֆ կընես, քեզի չըսի՛ քի չեմ հասկընար տէյի ... երթամ երթամ ըսելով՝ կը հեռանայ մօտէն, մինչ ասդին յոյնին կինը խօսք կառնէ,

— Բալէ ցօգ նիքօքէռա ֆամիլեայ իմիսլէր ... էլա բանայիամու, պիլէ իտիմ, պիզիմ քօքօնա Ֆօթինիցայի տա պառապառալիւ իտիմ ...

— Նէ՛ ես, պունլար պէօլէ տիր, մարդաւարի տիրէր, պագ սէն նապ էտիյօր ըտըն, չիմտի հազ էտիյօրսըն, կըսէ կնքամայրը, անօթութենէն խալխա խալխա աչքերը ճերմակ չարչաֆը փաթթուած սէլէին տնկելով։

— Իմառթօն բանայիեա մու, քալէ սահիհ տիւ, սահիհ, սու սարգամի ցիքառայիմ տա, պուլուզումի թա կէվսէտէյիմ, քօմաթի այէռաս թէլօ, եանի զէսթի քանի բօլի։

Մանուկ աղա քրտինքներու մէջ ծրար մը միս գրկած կը հասնի։

— Ջահմէթ եղաւ Մանուկ աղաս, ա՛ֆ կընես, խաչօր գիտնայի նէ ես ալ բան մը կը բերէի ամա, անկաճդ տուր ... քեզի մէկ հատ մէզէ մը բերեր եմ քի ... աչքիդ պոչովը մէյ մը նայէ, ան պուզըն ալ քակեց տէ քրքրուեցաւ նէ գիտես քի պլաբըն է, նայէ մէյմը ...

— Կայնէ նայինք նէֆէսս պոնուեցաւ, սօլուխ առնեմ տէ պլաբընէն վաղ եկայ, հոգիս վրայ չի տամ ...

— Ամա՛ն դուն ալ Մանուկ աղա՛, բէք թօնաֆ կը զուրցես ...

— Ինձի կուգայ քի թօնաֆ պան չէր ըսածս, պիլաքիս սիրտկոտորուկ բան էր ըսի նէ...

— Հէմ ինձի նայէ՛ ... որբեւարի ալ է ...

— Էյ ճանը՛մ ...

— Պաղնիքը տեսնա՛ս, բէլթէ է բէլթէ... ամա չելլայ կընիկդ ֆառդին երթայ տէ խըսխանձութին մը հանէ ...

— Կնքամար, դուն զէնահաթդ փոխեր ես կերեւայ քի ... ինչե՛ր կըսես կոր ...

— Ամա՛ն մայիս չէ՛ մի, եսպանի խոտերը պիլէ եէչիլլէնմիշ կըլլան կոր ... մենք ըլլանք նէ ամօթ է ...

— Հա՛ ... հասկցայ ըսածդ, անանկ է նէ ըսէ տէ ըռախին բերեն ...:

(Է՛ն սա՛ք Գիւրագրականը յաջորդով)։

ԼԻԼԱ

ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ա. Ն. Հաճախական

Տղա՛ս,

Չափազանց եռանդ դրած էիր տողերուդ մէջ, ինչպէս ծիծաղելի եռանդ մը, որ դրած էիր կիրակի օր նոյն իսկ հանդիսասրահին մէջ, փառաբանելու համար Ղալաթիոյ Դպրաց դասը և մանաւանդ Չիլինկիրեանը զոր պաշտելու աստիճան կը սիրես:

Մի՛ վազե՛ր այդչափ արագ
իմ աղւորիկ նապաստակ,
Շատ պզօիկ ես տակաւին
Թաքիկներդ կը յոգնին:

Այդքան խիզախութիւն դրած ըլլալուդ համար էր որ կերելի թէ հօրենական օճախէն դուրս տեղ փնտռած էիր քու հիացողական տողերդ թխմելու, կիրակի օրը ձակատարաց երեւալու համար անգուգական երգչախումբիդ առջեւ որ բնական է ինքզինքը վերաւորուած պիտի զգար հակառակ քու բոլոր լեզուանիութիւններուդ, «հետազգիր» առդերը տպուած տեսնելով հոն՝ ուր քու չափազանցուած հիացողականներդ կարդալու վարժուած էր: Ասիկայ քու միթարութիւնդ թող մնայ, ո՛վ բոյնէն դուրս ինկած թուշնակ, որ սուրբ հոգեւոր վառուած ես «միակողմանիութիւնը իր ծիծաղելի ծայրայեղութեան տանող» մէկու մը դէմ պայքարելու համար, չհասկցած, չըմբռնած, չիրացուցած երաժշտագիտութեամբդ, և ցոյց տալով միանգամայն թէ՛ քու միակողմանիութիւնդ չէ թէ միայն ծիծաղելի ծայրայեղութեան հասած է, այլ կոյր մոլեռանդութեան և վարժուածի մը չաղփախութեան:

Չարժեք որ քեզի հետ խելք դնելով ցոյց տամ թէ իւրաքանչիւր տող ի՛նչ նկատումով գրի առնուած է, և թէ ամէն մէկ բառի տակ ի՛նչ կուրութիւն և բարձրաբարբառ տըգիտութիւն կայ միայն, տղա՛ս, նախ սորվէ և ապա ուսուցանելու ելիր:

Ղալաթիոյ Դպրաց Դասուն սենեակը յաճախել, քանի մը սուրճ առնել և կէս ժամ Չիլինկիրեան էֆէնտիի հետ խօսելով՝ մարդ երաժշտութենէ հասկցած չըլլար, երբ մանաւանդ գլուխ չունի և զուրկ է դատելու կա-

րողութենէ: Մարդ չեմ գիտեր ո՛ր աստիճան նապաստակի ուղեղով օժտուած ըլլալու է գրելու համար թէ՛ «Կեդրոնական վարժարանի երգեցիկ խումբը այնքան սուղ միջոցի մը մէջ այսպիսի արագ զարգացում ունեցաւ» որ երկու տարուան խոտոր ժամանակամիջոցին մէջ հազիւ հազ կրցաւ սորվիլ սեքեմաս ս'իվիւր մը, զոր Կեդրոնականի քանի մը հանդէսներուն և Պէրպէրեանի նուագահանդէսին և ուրիշ առիթներու կ'երգէ ու կ'երգէ: Երանի է, տղա՛ս, «փորձ» ըլլային իր երգածները, սակայն նորութիւններ, մեզի համոզելու համար թէ՛ երգչախումբը սուղ ժամանակի մէջ կ'առաջդիմէ, մինչ, հիմայ ցոյց արուած արդիւնքէն դատելով՝ կարծես թէ քայլ մը իսկ առած չունի:

Դուք էք նաեւ ըսողը թէ՛ ձեր հիացած երգչախումբին անդամներն տէր են իրենց տետրակներուն, ցուցանիչներուն գաղտնիքը գիտեն, վարժ ու կիրթ ձայն ունին, դուք էք ըսողը թէ անիկայ «գլած անցած է տեղական օ՛ր եւ է երգի խումբ»:

Տղա՛ս, ինչո՞ւ ձեր խելքէն ու հասկացողութենէն վեր խնդիրներու մէջ կը մտնէք, ամէն անոնք՝ որ քեզի տեսնալու պատհոնութիւն ունեցած են Ղալաթիոյ եկեղեցւոյ չըմբռնող, և կամ բոլոր այն տեղերը՝ ուր Չիլինկիրեան էֆէնտի իր խումբովը կերելի, — իբր անխուսափելի հետեւողք քու ստուերդ ունենալով միշտ իր կռնակը —, չատաղէկ գիտեն թէ ո՛ր աստիճան տգիտութեամբ կը խօսիք արուեստին վրայ և ի՛նչ ծիծաղելի լեզուանիութեամբ մը ուրիշներ կը համոզէք և ի՛նչ խելկատակ շարժումներով կը հետեւիք երգուածներու, հիացական արտայայտութիւններով, ասով հասկցնելու համար քու հասկացողութիւնդ... որ գերօ է:

Սիրելի՛ս, համոզուէ թէ քու հիացմանդ առարկայ երգիչ խումբը ալ գնահատելու վիճակին մէջ չես, և կը վախցուի որ օր մը անոր համար անխելահասօրէն ըրած գնահատութիւններդ ալ ետ առնես:

Ապրի՛ս, տղա՛ս, ասանկ պաշտպանողականներով, ալ համոզուեցայ թէ՛ իրաւ փառք ու պատիւը մէկ փարայի ընելու պիտի նըպաստես, Ղալաթիոյ Դպրաց Դասուն և Չիլինկիրեանին՝ զոր կը պաշտես: Ցտեսութիւն:

ՊԻՐԻՇ ՀԱՆԳԻՍԱԿԱՆ ՄԸ

ԱՅԻՐԵՏՈՒԼՆԵՐ

ԾՆԱՏԱՄ...

Մարդուն մէկը — անունը՝ Գէդէոն — կը ներկայանայ ատամնաբուժի մը՝ ձեռքերովը կզակը բռնած։

— Ա.մա՛ն պարոն ատամնաբուժ, ամա՛ն.

— Ինչ կայ, հրամմեցէք, սան՝ կ'նստեցէք, խախլէ մը...

— Ա.մա՛ն...

— Սիրելիս, նստեցէք, յոգնութիւն մը առէք, սուրճ մը խմեցէք, թէյ մը առէք...

— Մարեցայ, մեռայ...

— Լիմօնաթա մը ըսե՛մ...

— Մեռայ, մարեցայ...

— Ինչ կըսէք, իրա՛ւ այդքան սաստիկ է ցաւը որ կը մեռնիք ու կը մարիք կոր, հայտէ տղայ մի՛ ըլլաք, սանկ նստեցէք...

Մարդը — անունը Գէդէոն — կը նստի։ Ատամնաբուժը՝ բերանը բանալ կուտայ ու աչքերը մէջը կը պտտցնէ.

— Տի՛ր ակումանիդ է.

— Մայրէն սկսեցէք համբել, հինգերորդին կանդ առէք եւ հանելինիդ նայեցէք, բայց ինչպէս պիտի հանէք.

— Առանց ցաւի,

— Իրա՛ւ...

— Նոյն իսկ, դուք չպիտի իմանաք որ ձեր ակումաները տեղերնուն ելեր են...

— Ակումաներ մի՛, յոգնակի կը խօսի՛ք, իմ մէկ ակումս կը ցաւի եւ ոչ ակումաներս...

— Ա՛, ներողութիւն, ձեզի քիչ մը առաջուան յաճախորդիս հետ չփոթեցի աէ. այո, քիչ մը առաջ յաճախորդ մը ունէի եւ երեք ակումս առի...

— Իմ ալ երեք ակումս չառնես հա՛...

— Ո՛չ..., ինչ կըսէք, կարելի բան է. այո, երբ անոր երեք ակումս առի...

— Առանց ցաւի հարկաւ...

— ...նոյն իսկ չհաւատաց որ ակումանքը ելեր են, բայց դուք ալ անոր պէս ընելու էք, բնա՛ւ երեքալու չէք...

— Բայց առանց ցաւի պիտի հանէք ան...

— Նոյն իսկ մազի մը չափ երեքալու չէք.

— Բայց առանց ցաւի պիտի...

— Ա՛նշո՛ւշտ...

Ատամնաբուժը ֆերֆրինը կաւնէ ու Գէդէոնին կը մօտենայ...

Գէդէոն աչքերը հաւկիթի դեղնուցի չափ կը բանայ...

— Ի՛նչ, ասո՞վ պիտի քաշէք որ... դամ հանելիք ֆերֆրինէ մը մեծ տարբերութիւն չունի...

— Այո՛.

— Ասով եթէ քաշելու ըլլաք՝ ցաւ չի պիտի զգամ...

— Ո՛չ.

— Առանց ցաւի՝ դուրս պիտի ելլամ.

— Ա՛նշո՛ւշտ...

— Դուք նշանաւոր ատամնաբուժ մընէք անանկէնէ, եւ եթէ առանց ցաւի քաշէք ակումս, ձեզի ձրի ոէքլամ պիտի ըլլամ...

— Մէռսի՛.

— Դիմացս ելլողին ձեր գովեստը պիտի կարդամ. ո՛ւՖ, ամա՛ն ակումս. նորէն ցա...

— Մէռսի՛.

— Ընտանեկան շրջանակներու մէջ պիտի տարածայնեմ...

— Մէռսի՛.

— Գրական աշխարհին մէջ արձագանգել պիտի տամ եւ թերթի մը մէկ անկիւնը «Շնորհակալիք» մը պիտի ընեմ...

— Մէռսի՛.

— Պիտի գրեմ որ, «ակումս որ կը ցաւէր... առանց ցաւի հանեց այս ինչ ատամնաբուժը», ա՛խ, ցաւէն ակումս պիտի ուտեմ...

— Մէռսի՛.

— Ժամուն դուռը պիտի կենամ եւ... մուրալու ձեւին տակ ձեր ոէքլամը պիտի ընեմ..., ու՛Ֆ, ցաւը ոռակալիցա՛ւ նորէն...

— Մէռսի՛.

— Երբ սակայն առանց ցաւի քաշէք.

— Ա՛նշո՛ւշտ...

— Բայց վստա՛հ էք որ առանց ցաւի պիտի հանէք...

— Հա՛րկա՛ւ...

— Պատուոյ խօսք կուտա՛ք,

— Այո՛,

— Ուստի քաշեցէ՛ք նայիմ:

Գէդէոնն աչքերը կը դրոյն ու բերանը կը բանայ: Ատամնաբուժը ֆէրֆէրինը բերնէն ներս կը խօթէ ու ակուան բռնելով բոլոր ուժովը կը քաշէ: Գէդէոնն կովերու պէս կը պոռայ ու տեղէն կը ցատկէ, բայց ակուան փոխանակ ցատկելու տեղէն չերերար:

Գէդէոնն կը պոռայ.

— Ի՞նչ կընես կոր պէ՛հ՝...

— Երբեք քեզ անոր համար չեղաւ.

— Զեկեկ տեղէն կը հանէիր կոր...

— Գործերնիս շնորհով հետ ըլլալուն առանկ կըլլայ.

— Շնորհով, շնորհով ի՞նչ ըսել է.

— Շունի ակուայ...

— Հէ՛, ես շունի ակուայ ունիմ...

— Ամէն մարդ ալ ունի.

— Թօճափ բան, ի՞նչպէս մինչեւ հիմակ չեմ գիտցեր որ շան ակուայ ունիմ եղբր...

— Այո՛, երբ շնորհով ըլլայ ա...

— Ի՞նչ, առանց ցաւի չքաշուիր.

— Կը քաշուի երբ չերերաք...

Գէդէոնն նորէն կը նստի, ատամնաբուժը ծունկը անոր փորին կը կոթնցնէ ու ֆէրֆէրինը բերանը խօթելով քրա՛ք ակուան կը կտրէ: Գէդէոնն վեր վեր ցատկելով կը պոռայ.

— Ճան գուրբարան...

— Ճանըմ, ի՞նչ կըլլաք կոր.

— Օգնութիւն..., օգնութիւն...

— Մի՛ պոռաք...

— Հասէ՛ք, ազատեցէ՛ք...

— Մի՛ պոռաք ըսի ու նորէ՛ն կը պոռաք.

— Ամա՛ն ակուաներս.

— Վնաս չունի, կանցնի.

— Ա՛յ, ղը՛, ղը՛ ղը՛ ա՛յ...

— Սո՛ւս, բա՛ն չկայ, շնորհով է...

— Շնորհով ալ գետնին տակը անցնի դո՛ւն ալ, շնորհով մարդ, ըսելով սանդուխներէն վար կը թաւալի Գէդէոն...

* * *

Շարաթ մը ետքը ատամնաբուժը պատահամամբ Գէդէոնի դէմը կեղտէ:

— Վայլեց ատ ըրածդ, ամէնուն ըսեր ես:

— Ի՞նչը, ի՞նչ բան, ի՞նչ եմ ըսեր.

— Իբր թէ ես քու ակուադ կտրեր եմ.

— Անանկ չեղաւ մի եմ.

— Եղա՛ւ, բայց կը տարածայնեն, խիղճ չունիս դուն մարդ, ըսելով սանդուխներէն վար կը թաւալի Գէդէոն...

— Խի՛ղճ, ունիմ, բայց խիղճս առ առա շնորհով ունի, ի՞նչ ընեմ:

Անմեռուի

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Մեր անցեալ թիւին լուրերու բաժնին մէջ, Սկիւտար Իճա-տիէի վարժարանին պղտիկներուն փողոցները պտտելնուն առթիւ մեզ տրուած լուրը, լոկ յերկրանք մը ըլլալը եւ թէ Պատ. Հոգաբարձութիւնը, ամենայն ձեռնարկներով վարժարանին կանոնին հակելը մօտէն ճշդելով, կը խնդրենք լրատուներէն որպէս զի ուրիշ առթիւ իրենց անձնական հաշիւները այլուր մաքրեն. (Ծ. Տնօրէնին):

ԼԱՆԿԱ-ՀԻՍՍՐ ՏԻՊԻ. — Հոս՝ օրուան նիւթն է, խղճամիտ՝ վարձակալին՝ անմիտ՝ տանտիրոջը կլեցուցած պոլօն. չորս ամիս անվճար՝ տունը նստելէն վերջ, չորս մէճիտ ալ փոխադրութեան ծախք վրայ առնելուն համար: (Ձմեռուան փայտը, ածուխը՝ Ծ. Խ.):

ՖԻԼՕՐԻՍ. — Մայիսի կանանչներէն հըրապուրուած՝ կանանչնալ ուզող միւսիւ մը, անցեալ կիրակի ազրը մէկուն բնտանիքին խօսք նետելուն՝ գիրքէ դուրս ծեծ մը կերաւ: (Կերակուելին վրայէն՝ Մալախա, իսկ ծրելկութեան վրայէն՝ Ֆալախա. Ծ. Խ.):

ՍԿԻԻՏԱՐ. — Կիրակի, Չամբադին զառիվերը ժադիցող օրիորդի մը այտերուն վառ գոյնէն յափշտակող միւսիւ մը, Չառախը «կառնեմ» ըսէր, երեկոյին սէրինին նոյն օրիորդին մեզառ քաշի բնական գոյնը տեսնելով՝ «թող մնայ ըսեր է: (Այդ աղջկան կուրծքին վրայ մանկալ մը դրէք, որպէսզի երեսներուն կարմիրը միշտ վառ մնայ. Ծ. Խ.) (Եւ կամ թէ՛ թող խայտէրցի զաղջիկ առնէ. Ծ. Լ.):

ՆՈՅՆ. — Զիֆիլիկ պարտէզին Տնօրէնը, ասպարէզ կը կարդայ եւ տասը քիւօ գարեջուր կը խոստանայ այն քաջ խմանին, որ կարենայ գաւաթ մը պաղ գարեջուր խմել մէկ ումպէն: (Էրեւթի ակուայ զնոյնները չիմանան, մոխիրի վրայ կը նստեցնեն մարդը... Ծ. Լ.):

Արտօգրք ԶԲԲԻՆ ԼՈՒԹԻՆԵԱՆ

ՏԳԱԳՐ. Ե. ԱՍՏԱՌԻՐԵԱՆ

Պապր-Ալի Գաւաթի քիւ 52.

ՄԵԾ Վ Ա.ՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԱՐԻ ԶԱՆՈՒՄ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Հանսա, Թօփապեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբ շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն փաթիւ-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—33



ԱՌԻԹԷՆ

ԵՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

[Ճեղք պէջ խանիւն]
տակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒՄՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգիրն	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 ի»
Արսասահման	»	»	12 ֆր.
		»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասսկի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ ջործախանք կը փնտռուի, պայմանաւ որ երախտաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգիրները:

Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանուարութով եւ կամ բոսթայի փուլով 20 հաւա-
20 զրուչի հաշուով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասէսի քիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ մօտ երեսուն տարուան հաստատութիւն մըն է, իր գեղեցիկ դործերովը, մաքրութեամբը և արագութեամբը արդէն մեծ համբաւ չահած և գրաւած է վըստահութիւնը ամէն անոնց՝ որոնք փորձով հաստատած են այս առաւելութիւնները:

Հերթիկ էֆ. Պոյաճեան այս անգամ Եւրոպայէն բերել տուած ըլլալով արհեստին կատարելագործեալ կարգ մը մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ մայրաքաղաքիս բոլոր կաղմարարներու արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:

Լ Ո Յ Ս

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՉԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆ, ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ ԵՌԱՎԱՆՆԷՍ ԷՖ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

«ԼՈՅՍ»՝ օրուան Դրականութեան օղկացը, իր սովորական ճոխ նիւթերէն եւ ինքնատիպ լուսանկարներէն զատ կը հրատարակէ նաեւ քաջատիկ թիւեր՝ ալ աւելի խընամոտ ու ճոխացեալ, որոնցմէ կրնան օգտուիլ անոնք՝ որոնք կը բաժանորդագրուին:

Պօլիսի համար 50 Ղրչ.

Դաւառի համար 60 »

Արտասահման՝ 12 Ֆռանք.

ՀԱՍՅԷ՝ Պապը-Ալի ճատաէսի Թիւ 38,
Մանգումէ օրաթերթին Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Ֆէրիտ էֆ. Դայսէրեան.

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իբր 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, դանել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Գէշիջեան վաճառատունըս թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յառուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեմներ, Ֆիթիֆօս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շարքեր, քաւ ֆօսէներ ևլն. ևլն.

Զերմապէս կը յանձրարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն գիմելով պիտի հաստատեն թէ՛ գինէրու աժանութեան, տեսակի ազնուութեան և ապրանքաց տկուկութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի չէ գտնել: